



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք"Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	3
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	6
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ	7
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ	9
ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .	11
ԲԱԺԻՆ 8. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ).....	13
ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՈՑԻՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	13
ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	13
ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	15
ԲԱԺԻՆ 12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	15

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1"1. Անչափահասների դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)» դասի մեջ:

1"2. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, իրավաբանական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիրներ) կնքում է դժբախտ պատահարներից կամավոր ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր) կամ ապահովագրության վկայագրեր (այսուհետ՝ Պայմանագիր):

1"3. Կանոնների համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Շահառուին սույն «Անչափահասների դժբախտ պատահարներից ապահովագրության կանոններով» (այսուհետ՝ «Կանոններ») սահմանված կարգով հատուցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն ամբողջությամբ կամ նրա մի մասը՝ կախված տեղի ունեցած վնասի չափից:

1"4. Կանոններով Ապահովադիր կարող է հանդիսանալ՝

1.4.1" ֆիզիկական անձը,

1.4.2" իրավաբանական անձը:

1"5. Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Ապահովադիր-ֆիզիկական անձի օգտին, այնպես էլ այլ ֆիզիկական անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձ կամ Ապահովագրված):

1"6. Ապահովագրված անձ կարող է լինել մինչև 18 տարեկանը լրացած ֆիզիկական անձը, ով հաճախում է մանկապարտեզ կամ դպրոց (ներառյալ՝ կրթահամալիր, արհեստագործական ուսումնարան, քոլեջ, ինչպես նաև հանրակրթական, արհեստագործական և միջին մասնագիտական այլ կրթական հաստատություններ):

1"7. Մեկ Պայմանագրով կարող է ապահովագրվել ֆիզիկական անձանց խումբ:

1"8. Շահառուն՝ Պայմանագրում նշված ֆիզիկական անձ է՝ Ապահովագրված անձի ծնողը կամ խնամակալը (օրինական ներկայացուցիչը), որին Ապահովագրված անձի հետ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում անցնում է ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

2.1" Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովագրված անձի (Շահառուի) օրենսդրությանը չհակասող գույքային կամ անձնական շահերը՝ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների բուժման և վերականգնման հետ կապված լրացուցիչ ծախսերի ձևով:

2.2" Կանոններով դժբախտ պատահար է համարվում ապահովագրված դեպքի հետ կապված արտաքին ֆիզիկական ներգործության արդյունքում առաջացած փաստացի, հանկարծակի կամ չակնկալվող պատահարները, ներառյալ ցանկացած երրորդ անձանց կողմից ներգործությունը (մանկապարտեզի կամ դպրոցի անձնակազմի անփութություն,

մասնագիտական պարտականությունների չկատարում կամ միտումնավոր գործողություններ, այլ երրորդ անձանց կողմից մանկապարտեզի տարածքում իրականացված ահաբեկչություն, վանդալիզմ, խուլիգանություն և այլ հակաօրինական գործողություններ), որոնց հետևանք կարող են հանդիսանալ Ապահովագրված անձի Կանոնների 3.2 կետում նշված վնասվածքներն ու վիճակները:

2.3" Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրում ապահովագրության տարածք է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական տարածքում գրանցված մանկապարտեզը կամ դպրոցը, մանկապարտեզային կամ դպրոցական ծրագրերի շրջանակներում օգտագործվող տրանսպորտային միջոցը և մանկապարտեզի կամ դպրոցի անձնակազմի ուղեկցությամբ այցելած վայրերը (քաղաքից դուրս, խաղային հրապարակ, գազանանոց, էքսկուրսիաներ, զբոսանքներ (բացառությամբ զբոսայգիներում կարուսելների վրա տեղի ունեցած պատահարները), ընդ որում՝ տրանսպորտային միջոցը պետք է սեփականության կամ պայմանագրային այլ ցանկացած իրավունքով տիրապետվի Ապահովագրի կողմից (պայմանագրային իրավունքի բացակայության դեպքում տրանսպորտային միջոցի մեջ կամ դրա հետ այլ կերպ կապված պատահարները ապահովագրական չեն համարվում):

2.4" Ապահովագրողը ապահովագրության տարածքի սահմաններից դուրս Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած պատահարի արդյունքում առաջացած վնասների համար ապահովագրական հատուցում չի իրականացնում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ

3.1" Ապահովագրական ռիսկ է համարվում պատահարի տեղի ունենալու հավանականությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրություն:

3.2" Կանոնների համաձայն ապահովագրական պատահարներ (ռիսկեր), որոնց տեղի ունենալու հետ կապված իրականացվում է ապահովագրությունը, կարող են հանդիսանալ դժբախտ պատահարի հետևանքով առաջացած հետևյալ վնասվածքները և վիճակները՝

3.2.1" տրավմատիկ վնասվածք,

3.2.2" կոտրվածք,

3.2.3" հոդախախտ,

3.2.4" սալքարդեր,

3.2.5" այրվածքներ (ներառյալ հրդեհի, պայթյունի, տաք կենցաղային տեխնիկայի և հեղուկների արդյունքում ստացված այրվածքներ),

3.2.6" վերքեր,

3.2.7" էլեկտրահարություն,

3.2.8" ցրտահարություն,

3.2.9" գլխի վնասվածքներ, ուղեղի ցնցում,

3.2.10" սննդային և գազի թունավորումներ (բացառությամբ՝ դիտավորությամբ կատարված գործողությունների կամ մասնագիտական անփութության արդյունքում պահպանման ժամկետից դուրս սննդի օգտագործումը, ինչպես նաև Ապահովագրված անձի օրգանիզմի առանձնահատկության շնորհիվ սննդի չընկալման դեպքերը),

3.2.11" աչքի վնասվածք:

3.3" Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրվածի համար հանկարծակի, չկանխատեսված և նրա կողմից ոչ

կանխամտածված պատահարը, որի արդյունքում տեղի են ունեցել Կանոնների 3.2 կետում նշված վնասվածքներն ու վիճակները և ինչը հաստատված է օրենսդրությամբ իրավասու մարմինների կողմից տրված համապատասխան փաստաթղթերով:

3.4" Ապահովագրական պատահարներ չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝

3.4.1" Կանոնների 3.2 կետում նշված ցանկացած հիվանդություն և վիճակ, որը պահանջում է բուժում, հետազոտում, հոսպիտալացում, դեղորայք և բժշկական պարագաներ,

3.4.2" հետազոտությունները, որոնց արդյունքում չեն հայտնաբերվել Կանոնների 3.2 կետով նշված վնասվածքներն ու վիճակները

3.4.3" բոլոր այն պատահարները, որոնք ի հայտ են եկել Ապահովագրված անձի ցանկացած կարգի հաշմանդամ լինելու պատճառով, ինչպես նաև օնկոլոգիական հիվանդությունների արդյունքում, բնածին անոմալիաները և զարգացման արատները կամ անատոմիական առանձնահատկությունները, ժառանգական և գենետիկ հիվանդությունները, էպիլեպսիան, դեֆորմացիաները և քրոմոսոմային խանգարումները, մանկական ուղեղային պարալիչը և նշվածների արդյունքում առաջացած վնասվածքները,

3.4.4" ապահովագրության ժամկետի սկզբում նախապես առկա վնասվածքները և դրանց բարդությունները,

3.4.5" բոլոր տեսակի ընդհանուր, քրոնիկ և սուր հիվանդությունները և դրանց արդյունքում առաջացած վնասվածքները,

3.4.6" ալերգիաները և դրանց հետևանքները,

3.4.7" ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումները, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունները, ողնաշարի ճողվածքներ, օստեոպենիան, օստեոպորոզը, սկոլիոզ, կիֆոզ,

3.4.8" խոսքի շտկումը,

3.4.9" կոսմետիկ, էսթետիկ կամ ապահովագրված անձի հոգեբանական վիճակը բարելավելու նպատակներով իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատությունները, այդ թվում՝ մաշկի հիվանդության կապակցությամբ, քթի միջնապատի շտկումը, դրանց բարդացումները՝ բացառությամբ ապահովագրության ժամկետի ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով առաջացածները,

3.4.10" ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժման ու ախտորոշման մեթոդները, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժումը, կազդուրման ավանդական համակարգերը, հեռաբժշկության հետ կապված ծառայությունները, ֆիզիոթերապիան և վերականգնողական բուժում, սանատոր-առողջարանային բուժումը

3.4.11" ուլտրամանուշակագույն ճառագայթների արդյունքում առաջացած արևահարումներն ու արևայրուքները

3.4.12" տեսողության սրության վիրահատական շտկումը, ակնաբուժական վիրահատություններ՝ բացառությամբ ապահովագրության ժամկետի ընթացքում դժբախտ պատահարի արդյունքում աչքի վնասվածքների,

3.4.13" օրգանների և վերջույթների պրոթեզավորումները, էնդոպրոթեզավորումները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, լսողական սարքերի ձեռքբերումը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ ձեռք բերելու և դրանց հարմարեցման համար կատարված ծախսերը, հաշմանդամային սայլակները, օրթոպեդիկ սարքերը և այլն, կենսաակտիվ հավելումները, վիրամիներալթերապիան, կոսմետիկ պարագաները, սրտի արհեստական ռիթմավարները, կարդիովերտեր-դեֆիբրիլյատորները

3.4.14" հոգեկան հիվանդությունները, դրանց հետևանքները և սահմանային

ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԴԺՐԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

վիճակները (նկրոզ, փսիխոպաթիա, փսիխոզ և այլն), հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս, ինչպես նաև դրանց արդյունքում առաջացած վնասվածքներն ու վիճակները,

3.4.15" Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը, առանց բժշկի ցուցումի և նշանակման իրականացված բուժման ծախսերը ծառայությունները, դեղորայք, հոսպիտալացումը,

3.4.16" Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելու (բացառությամբ ուրիշի կյանքը փրկելու):

3.4.17" ՀՀ դեղագործական վարչության կողմից չարտոնագրված դեղորայքը,

3.4.18" համաճարակները, վիրուսային և ինֆեկցիոն հիվանդությունները,

3.4.19" շահառուի կողմից միտումնավոր գործողության կամ հանցագործության հետևանքով առաջացած վնասվածքները և վիճակները,

3.4.20" մանկապարտեզի և դպրոցի տարածքից դուրս գտնվող կարուսելների և մետաղական սղարանների վրա ստացված վնասվածքները,

3.4.21" ֆորս-մաժորի (միջուկային պայթյուն, ճառագայթային ռադիոակտիվ կամ քիմիական վարակ, ռազմական գործողություններ, քաղաքացիական պատերազմ, հասարակական հուզումներ կամ գործադուլների) հետևանքով առաջացած վնասվածքները:

3.5" Կանոնների 3.4 կետում նշված արարքները, որպես այդպիսին ճանաչվում են բժշկի եզրակացությամբ, դատաբժշկական փորձաքննությամբ, դատարանի որոշմամբ, կամ այդ արարքները հավաստող օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

4.1. Ապահովագրական գումարը, որի շրջանակներում կարող է կնքվել Պայմանագիրը, որոշվում է Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ և իրենից ներկայացնում է որոշակի դրամական արտահայտությամբ գումար, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն կվճարվի Ապահովագրվողին (Ապահովագրված անձին, Շահառուին) Պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում:

4.2. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը համապատասխան ստորագրությամբ Ապահովադրին առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադրին իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

4.3. Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է վճարել Ապահովագրողին: Ապահովագրավճարը ըստ Պայմանագրի որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ապահովագրական գումարի, սակագնի (տարիֆային դրույքների) և ապահովագրության իրականացման ժամկետների հիման վրա:

4.4. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից Պայմանագրի համաձայն կարող է

վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) ապահովագրության ամբողջ ժամկետի համար կամ տարաժամկետ:

4.5. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին (ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

4.6. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

4.7. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

4.8. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար սահմանում է լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում ծանուցելով Ապահովադիրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

4.9. Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադիրին այդ մասին ծանուցելու:

4.10. Եթե ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ազատվում է հատուցում կատարելու պարտականությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքներում:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

5.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ կողմեր) միջև կնքվող գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ վճարել ապահովագրական հատուցում այն անձին ում օգտին կնքվել է Պայմանագիրը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Պայմանագրում սահմանված ժամկետներում վճարել ապահովագրավճար:

5.2. Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի և Շահահառուի բանավոր կամ գրավոր հայտարարությունը:

5.3. Պայմանագրի կնքման համար Ապահովագրողը կարող է պահանջել նաև ապահովագրական ռիսկի հետ առնչվող փաստաթղթեր:

5.4. Պայմանագիրը կարող է կնքվել ցանկացած ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որի մասին նշում է կատարվում Պայմանագրում: Եթե Պայմանագրում այլ բան նախատեսված չէ, ապա Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

5.5. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի համաձայն տալիս է կրկնօրինակ, որից հետո կորցրած օրինակը համարվում է անվավեր:

և դրանով վճարումներ չեն կատարվում: Ապահովագրողը կարող է Ապահովադրից գանձել Պայմանագրի կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար կատարված ծախսերի գումարը:

5.6. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

5.6.1" Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո:

5.6.2" Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն իր պարտավորությունների լրիվ ծավալով կատարելուց հետո:

5.6.3" Ապահովագրվածի մահվան դեպքում,

5.6.4" Պայմանագրի կողմերի համաձայնությամբ,

5.6.5" Օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում, եթե տվյալ ապահովագրական դիսկը, ապահովադրի համաձայնությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի փոխանցվում այլ ապահովագրական ընկերության:

5.6.6" Ապահովադրի լուծարման դեպքում, երբ Ապահովագրվածը կամ երրորդ անձը (շահառուն) իր վրա չի վերցրել Ապահովադրի կողմից ապահովագրավճարների մուծման և այլ պարտավորությունները:

5.6.7" Օրենքով, իրավական ակտերով և Կանոններով նախատեսված այլ դեպքերում:

5.7. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

5.8. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

5.9. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն են վերադարձվում ապահովագրավճարները՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

5.10. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար (անկախ այն փաստից՝ ապահովագրական հատուցումը մերժվել է, թե ոչ, և Ապահովադիրը և Շահառուն համաձայնվել է արդյոք Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ

եզրակացության հետ):

5.11. Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են Պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

6.1. Ապահովադիրը (Շահառուն) հատուցում ստանալու համար պետք է Ապահովագրողին ներկայացնի գրավոր դիմում՝ նշելով Ապահովագրված անձի անուն, ազգանուն, հայրանունը և պատահարի տեղի ունենալու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև ներկայացնել պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

6.2. Հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

6.2.1" Ապահովադրի (Շահառուի) կողմից հատուցում ստանալու վերաբերյալ դիմում,

6.2.2" Բժշկական հիմնավորում՝

6.2.2.1. բժշկական տեղեկանք (բժշկական կենտրոնի կնիքով),

6.2.2.2. խորհրդատվական եզրակացություն (բժշկական կենտրոնի կնիքով), կամ

6.2.2.3. քաղվածք ամբուլատոր քարտից (բժշկական կենտրոնի կնիքով), կամ

6.2.2.4. էպիկրիզ (բժշկական կենտրոնի կնիքով),

6.2.2.5. պարակլինիկական հետազոտությունների պատասխաններ (անհրաժեշտության դեպքում)

6.2.3" Վնասի չափը հաստատող փաստաթղթեր, եթե ծախսն իրականացվել է Ապահովադրի (Շահառուի) կողմից ինքնուրույն՝

6.2.3.1. հաշիվ-պահանջագիր, կամ

6.2.3.2. դրամարկղային ֆիսկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ ՀԴՄ կտրոն համապատասխան հաշիվ-ապրանքագրով,

6.2.3.3. բուժհաստատության կողմից համապատասխան ձևաթղթի վրա տրված տեղեկանք, որը հաստատված է (կնքված է) բուժհաստատության կողմից և հավաստում է բժշկական ծախսի չափը,

6.2.3.4. եթե պատահարը տեղի է ունեցել երրորդ անձանց մեղքով, ապա պատահարի վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի եզրակացությունը.

6.2.4" Պայմանագրի բնօրինակը:

6.3. Եթե հատուցման իրականացման (վնասի գնահատման) համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել բժշկական փորձաքննության անցկացում, որը անց է կացվում Ապահովագրողի հաշվին:

6.4. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Կանոններով սահմանված փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Այդ ժամկետում Ապահովադրի (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադրի (Շահառուի) կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն

կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում: Այն դեպքում, երբ Ապահովագիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովագիր (Շահառուի) կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

6.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել 3.2 կետով սահմանված վնասվածքների բուժման համար կատարված փաստացի ծախսերը (արտահիվանդանոցային և հիվանդանոցային ձևով իրականացվող բժշկական ծառայություններ, դեղորայք, կարճաժամկետ օգտագործման բժշկական պարագաներ, տեղափոխում բժշկական կենտրոն, անհատական հիվանդասենյակի տրամադրման ծախսերը՝ յուրաքանչյուր օրվա համար 5 000 ՀՀ դրամ, մետաղական կոնստրուկցիաներ, ատամի կոտրվածքի և վնասվածքի բուժումը), ընդ որում պատահարի արդյունքում ստացած բոլոր վնասվածքները պետք է արձանագրված լինեն իրավասու մարմինների կողմից:

6.6. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում): Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրի (Շահառուի) կողմից տրամադրված հասցեով փոստային առաքմամբ կամ էլեկտրոնային եղանակով (Ապահովագրի/Շահառուի էլեկտրոնային փոստի հասցեին), տրամադրում է Ապահովագրին (Շահառուին): Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:

6.7. Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովագիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

6.8. Հատուցման վճարումը կատարվում է Ապահովագրողի դրամարկղից կանխիկ եղանակով կամ հատուցման գումարը ստացողի բանկային հաշվին փոխանցելով, եթե բանկային հաշվի տվյալները նշվել են ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին ներկայացված դիմումի մեջ: Հատուցման վճարումը կարող է կատարվել Ապահովագրի (Շահառուի) ներկայացուցչին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված համապատասխան լիազորագիր ներկայացնելու դեպքում:

6.9. Հատուցման վճարման որոշումն Ապահովագրողի կողմից կարող է հետաձգվել, եթե ապահովագրական պատահարի հետ կապված փաստերը ճշգրտելու համար իրավական ակտերով սահմանված հիմքերով նշանակված է լրացուցիչ ստուգում, հարուցված է քրեական գործ, դատավարություն կամ այլ իրավաբանական վարույթ: Այդ դեպքում հատուցման վճարման որոշման կայացումը կարող է հետաձգվել մինչև նշված գործընթացների ավարտը կամ Կանոններով հատուցման վճարմանը խանգարող այլ հանգամանքների վերացումը:

6.10. Ապահովագրողն իրավունք ունի մերժել հատուցման վճարումը, եթե քննության արդյունքում պարզվում է, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի (Շահառուի) կողմից Ապահովագրողին տրամադրվել են Ապահովագրված անձի առողջական վիճակի մասին կեղծ տեղեկություններ, ինչպես նաև այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի, Ապահովադրի կամ Շահառուի կողմից իրականացվել են դիտավորյալ գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:

6.11. Ապահովագրողի կողմից հատուցման վճարման մերժման մասին որոշումը հայտնվում է Ապահովադրին (Շահառուին) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

6.12. Շահառուի մահվան դեպքում հատուցում ստանալու իրավունքն անցնում է Շահառուի ժառանգներին կամ Ապահովագրված անձի մյուս ծնողին կամ օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալին, եթե Ապահովադրի կողմից չի նշանակվում նոր Շահառու:

6.13. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ ապահովագրության պայմանագրի հիման վրա (անկախ հատուցման գումարը վճարված լինելու հանգամանքից) (ապահովագրական հատուցում վճարելիս առաջնությունը տրում է պարտադիր ապահովագրության տեսակով կնքված ապահովագրության Պայմանագրերի գծով ապահովագրական հատուցումներին) կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից, ապա Կանոններով նախատեսված կարգով հատուցվող գումարից մասհանվում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից սույն ենթակետով նկարագրված կարգով ստացված գումարները (հատուցումները):

ԲԱԺԻՆ 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

7.1.1" Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Կանոններով սահմանված կարգով,

7.1.2" Պայմանագրի թղթային օրինակը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,

7.1.3" Կանոններով նախատեսված կարգով փոփոխել Պայմանագրի պայմանները,

7.1.4" Ծանոթանալ Պայմանագիրը կնքելու պահին գործող ապահովագրական սակագների հետ,

7.1.5" Ապահովագրել լրացուցիչ անձանց Կանոններով սահմանված կարգի համաձայն,

7.1.6" Վերահսկել Կանոնների և Պայմանագրի պայմանների կատարումը:

7.2. Ապահովադիրը պարտավոր է՝

7.2.1" Ապահովագրողին հաղորդել ապահովագրական ռիսկի աստիճանը որոշող հավաստի և ճշգրիտ տեղեկություններ,

7.2.2" Պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել ապահովագրավճարները:

7.2.3" Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է պատահարը տեղի ունենալուց հետո Պայմանագրով սահմանված ժամկետներում, բայց ցանկացած դեպքում 3 օրից ոչ ուշ, տեղեկացման փաստը հավաստող ցանկացած միջոցով, պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:

7.2.4" Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 7.2.3 ենթակետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

7.2.5" Եթե Ապահովադիրը և/կամ Շահառուն Ապահովագրողին տեղեկացնում է պատահարի մասին, սակայն երկարատև բուժման մեջ գտնվելու հետևանքով չի կարողանում Ապահովագրողին ներկայացնել հատուցման վճարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա Ապահովադիրը և/կամ Շահառուն պարտավոր է առնվազն 10 օրը մեկ անգամ Ապահովագրողին տեղեկացնել (տեղեկացման փաստը հավաստող ցանկացած միջոցով) հիվանդության և բուժման ընթացքի վերաբերյալ Ապահովագրողին անհրաժեշտ տեղեկատվություն, այդ ժամկետներում և կարգով չտեղեկացնելու դեպքում Ապահովագրողը կարող է մերժել հատուցման վճարման հարցը:

7.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

7.3.1" Ստուգել Ապահովադիրի (Շահառուի) կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև Ապահովադիրի (Շահառուի) կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը:

7.3.2" Անհրաժեշտության դեպքում հարցադրումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

7.3.3" Դադարեցնել Պայմանագիրը,

7.3.4" Մերժել հատուցման վճարումը օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմանագրով կամ Կանոններով սահմանված կարգով,

7.3.5" Իրականացնել Ապահովադիրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

7.4. Ապահովագրողը պարտավոր է՝

7.4.1" Ապահովադիրին (Շահառուի) ծանոթացնել ապահովագրության պայմաններին (Կանոններին), Ապահովադիրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը:

7.4.2" Ապահովադիրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն:

7.4.3" Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզել դրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն:

7.4.4" Չհրապարակել Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) բանկային, առևտրային, ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները, Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) առողջական վիճակի և գույքային դրության մասին ստացած տեղեկությունները:

7.5. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և ապահովագրության պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 8. ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

8.1. Պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովագրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

8.2. Հիատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ դրամական արտահայտությամբ:

8.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե Ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

8.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

9.1. Ապահովագրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում:

9.2. Ապահովագրի (Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

9.3. Եթե Ապահովագրի (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրի (Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

10.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովագրի (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովագրի (Շահառուն) է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ

հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

10.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ծայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

10.3. Կետ 10.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

10.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել:

Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

10.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 10¹ կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 11. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

11.1. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

11.2. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ "Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին" ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում:

ԲԱԺԻՆ 12. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Պայմանագրի կնքումից հետո Կողմերի միջև իրականացվող բոլոր հայցերը, պահանջները, դիմումներն ու այլ հաղորդակցությունն իրականացվում է գրավոր ձևով:

12.2. Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

12.3. Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: